ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2024 թվականի N -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N1825-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N1825-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

- 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2) գործերի կառավարչությունից առանձնացման եղանակով ստեղծվում է կազմակերպավերլուծական բաժինը,»,

- 4-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունից առանձնացման եղանակով ստեղծվում են զինվորական ներկայացուցչությունների բաժինը, բաժնեմասերի կառավարման բաժինը և մաքսային ձևակերպումների բաժինը,»,

- 7-րդ ենթակետը լրացնել «ե» և «զ» պարբերություններով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե. սպառազինության և տեխնիկական ապահովման վարչությունը,

զ. թիկունքային ապահովման վարչությունը,»,

- լրացնել 8-րդից 10-րդ ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«8) նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը միանում է գնումների կազմակերպման վարչությանը,

9) բաժնեմասերի կառավարման բաժինը միանում է գործերի կառավարչությանը,

10) մաքսային ձևակերպումների բաժինը միանում է կենտրոնացված փոխադրումների ապահովման (լոգիստիկ) վարչությանը։»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի: Սույն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետն ուժի մեջ է մտնում որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված կառուցվածքային փոփոխության հետևանքով քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած պաշտոնները սահմանված կարգով զբաղեցվելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սահմանել, որ սույն որոշման համաձայն զինվորական ներկայացուցչությունների բաժնի, սպառազինության և տեխնիկական ապահովման վարչության, թիկունքային ապահովման վարչության կառուցվածքային փոփոխությունների գործողությունը տարածվում է այդ ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատման օրվանից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Երևան 2024թ.